ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԱՀԱԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀՈՎԻԿԻ

ԹՈՒՐՔ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 20-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ 21-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Է.00.02 «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ
ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ
ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2014

Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնում

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր Ավագյան Ա.Գ.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր Կարապետյան Ռ.Կ.

պատմական գիտությունների թեկնածու Դումանյան Ա.Դ.

Առաջատար կազմակերպություն՝ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2014 թ. մայիսի 30-ին, ժ. 14[00]-ին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մ. Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. ապրիլի 25-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Ղազարյան Ռ.Պ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Թուրք-իսրայելական հարաբերությունների ուսումնասիրությունը մեծ կարևորություն ունի մերձավորարևելյան քաղաքական գործընթացների վերլուծության և ճիշտ գնահատման տեսակետից: Թուրք-իսրայելական կապերը մշտապես գտնվել են տարածաշրջանային պետությունների և համաշխարհային գերտերությունների ուշադրության կենտրոնում՝ հաշվի առնելով դրանց առանցքային նշանակությունն այնպիսի կարևոր տարածաշրջանում, ինչպիսին Մերձավոր Արևելքն է: Երկու պետությունների միջև կես դարից ավելի շարունակվող համագործակցությունն ընդգրկում է գրեթե բոլոր ոլորտները՝ քաղաքական, սոցիալ-տնտեսական ու ռազմական, ընդ որում գերակայող էր ռազմական ոլորտը՝ հատկապես 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին:

Պետության ստեղծման առաջին իսկ օրվանից Իսրայելի համար առաջնահերթ խնդիր է եղել համագործակցել Թուրքիայի և տարածաշրջանային ոչ արաբական այլ պետությունների հետ, ինչն իր արտահայտությունը գտավ Իսրայելի արտաքին քաղաքականության «ծայրամասային ռազմավարության» տեսլականում, որը մշակվեց Իսրայելի առաջին վարչապետ Դավիդ Բեն Գուրիոնի կողմից: Թուրքիայի աշխարհիկ համակարգը, ինչպես նաև բազմադարյա օսմանյան տիրապետությունը, Ալեքսանդրետի սանջակի խնդիրը, ջրի հիմնախնդիրը, արևմտամետ կողմնորոշումը և այլն, պատճառ էր, որ Թուրքիան այդքան էլ լավ հարաբերություններ չունենա արաբական պետությունների հետ:

Թեմայի համակողմանի ուսումնասիրությունն արդիական է ոչ միայն 1990-ական թթ. Թուրքիայի Հանրապետության արտաքին քաղաքականության առանձնահատկություններն ու հիմնական միտումները վեր հանելու, այլ նաև ժամանակակից շրջանում այդ պետության արտաքին քաղաքական գերակայությունները ճիշտ հասկանալու և համարժեքորեն գնահատելու տեսանկյունից:

Հետազոտության թեման արդիական է նաև այն առումով, որ ներկա փուլում թուրք-իսրայելական հարաբերություններում առկա խնդիրները ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է հասկանալ երկկողմ հարաբերությունների զարգացման դինամիկան Իսրայել պետության ստեղծումից մինչև Թուրքիայում Արդարություն և զարգացում կուսակցության (հետայսու՝ նաև ԱԶԿ) իշխանությանը գալը:

Թեմայի ուսումնասիրությունն առնչություն ունի նաև Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության հետ: Հաշվի առնելով այն, որ Հայաստանի արտաքին քաղաքականության գերակայություններից է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը, Թուրքիան կարիք ունի հրեական լոբբիի (առաջին հերթին ԱՄՆ-ում) աջակցությանը՝ միջազգային հարթակում Հայոց ցեղասպանության ճանաչմանն

ուղղված քայլերը կասեցնելու համար: Բացի այդ, քանի որ թուրք-իսրայելական հարաբերությունների առաջնային ոլորտ էին հանդիսանում ռազմատեխնիկական համագործակցությունը, Թուրքիայի ռազմական ուժերի վերազինումն ու արդիականացումը, ինչպես նաև Թուրքիայի, Իսրայելի և Ադրբեջանի միջև առկա է եռակողմ ռազմատեխնիկական համագործակցություն, ապա այս հարցերի ուսումնասիրումն ու վերհանումը կարևոր ու արդիական է ոչ միայն տարածաշրջանային անվտանգության, այլ նաև արտատարածաշրջանային, այդ թվում հայկական կողմի (ՀՀ և ԼՂՀ) ռազմական անվտանգության գործոնների դիտարկման տեսանկյունից:

Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ աշխատանքում քննարկվում և համակողմանիորեն արժեքավորվում է թուրք-իսրայելական հարաբերությունների հիմնահարցերի մի փունջ, որը կարևոր է ՀՀ մերձավորարևելյան քաղաքականության ձևավորման համար:

Հետազոտության խնդիրներն ու նպատակները: Ատենախոսությունում ընդհանուր ակնարկ է արվել թուրք-իսրայելական հարաբերությունների զարգացման դինամիկային 1948-2002 թթ., ուսումնասիրվել են Թուրքիայի և Իսրայելի արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները, երկկողմ հարաբերությունների ռազմավարական համագործակցության առանձնահատկությունները և տարբեր բնագավառները: Ատենախոսության նպատակներից է վերլուծել 1990-ական թթ. թուրք-իսրայելական ռազմավարական համագործակցության բնույթն ու էությունը, համագործակցությանը նպաստող և սահմանափակող տարածաշրջանային ու արտատարածաշրջանային գործոնները, երկկողմ կապերի հիմնական ոլորտները և հարաբերությունների զարգացման միտումները: Հետազոտության թեման ընտրելիս հաշվի է առնվել այս երկու պետությունների առանձնահատուկ նշանակությունը մերձավորարևելյան տարածաշրջանում: Թեմայի բազմակողմ վերլուծության համար առաջադրել ենք հետևյալ նպատակները:

- Ուսումնասիրել «Սառը պատերազմի» տարիներին երկբևեռ միջազգային քաղաքական համակարգի պայմաններում Թուրքիայի ու Իսրայելի արտաքին քաղաքական կուրսը և երկկողմ փոխհարաբերությունների զարգացման դինամիկան՝ դիտարկելով դրանք նաև տարածաշրջանային հիմնախնդիրների համատեքստում:
- Ցույց տալ, թե Իսրայելի արտաքին քաղաքական հայեցակարգերում ինչ նշանակություն ունի Թուրքիան, և հակառակը:
- Ուսումնասիրել Սառը և Ծոցի պատերազմների ավարտից հետո միջազգային և տարածաշրջանային գործընթացներում տեղի ունեցած փոփոխությունների ազդեցությունները Թուրքիա-Իսրայել երկկողմ կապերի վրա:
- Ներկայացնել Թուրքիայի ու Իսրայելի միջև սերտ համագործակցություն ձևավորելու տարածաշրջանային ու արտատարածաշրջանային նախադրյալներն ու դրդապատճառները և վերլուծել,

թե ինչու ռազմավարական համագործակցությունը երկու պետությունների միջև ձևավորվեց հենց 1990-ական թթ.:

- Ուսումնասիրել, թե երկկողմ համագործակցությունը որ ոլորտներն էր հիմնականում ընդգրկել, ինչպես նաև բացահայտել՝ որոնք գերակա բնույթ ունեին:
- Ներկայացնել երկու պետություններում ներքաղաքական իրադարձությունների և հասարակական տրամադրությունների ազդեցությունները երկկողմ հարաբերությունների զարգացման վրա:
- Ներկայացնել, թե Թուրքիայի քաղաքական որ շրջանակներն էին հատկապես շահագրգռված Իսրայելի հետ ռազմավարական համագործակցություն ձևավորելու հարցում:
- Հետազոտել և վերլուծել 1996 թ. Թուրքիայում իշխանության եկած իսլամամետ Բարօրություն կուսակցության (այսուհետ նաև ԲԿ) արտաքին քաղաքական գծի փոփոխությունը և ունեցած ազդեցությունը երկկողմ հարաբերությունների վրա:
- Բազմակողմանի վերլուծել թուրք-իսրայելական ռազմավարական համագործակցությունը և դրանց ազդեցությունը տարածաշրջանային գործընթացների վրա:
- Ուսումնասիրել երկկողմ կապերի ձևավորման հարցում այլ պետությունների, առաջին հերթին ԱՄՆ-ի ունեցած դերակատարությունը:
- Ներկայացնել, որ երկու պետությունների համագործակցությունն ուներ ոչ միայն տարածաշրջանային, այլ նաև համաշխարհային բնույթ՝ կապված միմյանց հնարավորությունների օգտագործման հետ:
- Վեր հանել թուրք-իսրայելական համագործակցության համար խոչընդոտ և մարտահրավեր հանդիսացող գործոնները և դիտարկել դրանց ունեցած ազդեցությունը երկկողմ կապերի վրա:

Ատենախոսության գիտական նորույթը: Աշխատության գիտական նորույթը կայանում է նրանում, որ փորձ է կատարվում բազմակողմանի ուսումնասիրել թուրք-իսրայելական ռազմավարական համագործակցությունը 20-րդ դարի վերջին ու 21-րդ դարի սկզբին և հնարավորինս հանգամանալից ներկայացնել թուրք-իսրայելական հարաբերությունների ազդեցությունը տարածաշրջանային գործընթացների վրա: Ատենախոսությունն իր բովանդակությամբ ու հարցադրումներով հայրենական պատմագրությունում առաջինն է, որում փորձ է արվում ամբողջական ու համալիր կերպով ուսումնասիրել ու գնահատական տալ թուրք-իսրայելական հարաբերությունների զարգացման դինամիկային, Թուրքիայի և Իսրայելի միջև ձևավորված ռազմավարական համագործակցությանը, դրան նպաստող ու խոչընդոտող տարածաշրջանային ու միջազգային գործոններին, հարաբերությունների զարգացման հիմնական միտումներին՝ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դնելով մի շարք օտարալեզու պաշտոնական փաստաթղթեր և տեղեկագրեր:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները: Ատենախոսության ժամանակագրական սահմանները ընդգրկում են 20-րդ դարի վերջը և 21-րդ դարի սկիզբը, թեպետ հետազոտության տրամաբանությամբ՝ ատենախոսության մեջ հիշատակված որոշ փաստեր և իրադարձություններ դուրս են գալիս ժամանակագրական շրջանակներից: Ժամանակագրության մեկնարկային թվական է հանդիսանում 1991 թ., երբ տարածաշրջանային և միջազգային հարաբերություններում տեղի ունեցան մի շարք խոշորամասշտաբ իրադարձություններ և փոփոխություններ: Սառը և Ծոցի պատերազմները, Մադրիդի խաղաղության համաժողովը մեծ ազդեցություն ունեցան Իսրայելի ու մասնավորապես Թուրքիայի արտաքին քաղաքականության վրա, և հենց այդ նույն տարվա վերջում կողմերը վերականգնեցին դիվանագիտական հարաբերությունները՝ դեսպանների մակարդակով: Ժամանակագրությունն ընդրկում է մինչև 2002 թ. ներառյալ, երբ տարեվերջին Թուրքիայում իշխանության եկավ ԱԶԿ-ն: Նման ժամանակագրության ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հենց այդ շրջանում են Թուրքիան ու Իսրայելը ձևավորել ռազմավարական համագործակցություն, իսկ կողմերի միջև կապերի բազմակողմանիությունն աննախադեպ էր:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը: Թեմայի համակողմանի և ամբողջական լուսաբանման տեսակետից մեթոդական իմաստով աշխատանքում խիստ կարևորվում է համալիր մոտեցումն ինչպես սկզբնաղբյուրների, այնպես էլ հրապարակի վրա եղած պատմագիտական ուսումնասիրությունների նկատմամբ: Կարևորություն է տրվել նաև սկզբնաղբյուրների և գիտական աշխատությունների համակեցությանը, որի միջոցով պատմական դեպքերի գնահատականը դառնում է ավելի հավաստի և օբյեկտիվ: Ելնելով հետազոտության թեմայի բազմաշերտ ու բազմակողմ բնույթից՝ աշխատանքում օգտագործվել են նաև պատմավերլուծական և պատմաքաղաքագիտական քննության մեթոդները:

Աշխատանքի կիրառական նշանակությունը: Ատենախոսության դրույթները կարող են օգտակար լինել պատմագիտական և քաղաքագիտական հետազոտությունների, պետական մարմիններին վերլուծական նյութեր տրամադրելու, ինչպես նաև Թուրքիայի նկատմամբ ՀՀ արտաքին քաղաքական կուրսը մշակելու տեսանկյունից: Ատենախոսության թեման կարող է դիտարկվել որպես օգտակար նյութ ինչպես համաշխարհային պատմություն, այնպես էլ միջազգային հարաբերություններ ու քաղաքագիտություն առարկաներից: Հետազոտության հիմնական բովանդակությունը, դրույթներն ու եզրահանգումները կարող են կիրառվել նաև դասախոսություններում:

Ատենախոսության փորձաքննությունն ու պաշտոնական հավանությունը: Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները ներկայացվել են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է

երաշխավորվել ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության և արաբագիտության ամբիոնների կողմից:

Սկզբնաղբյուրների ու գրականության տեսություն: Ատենախոսությունը գրվել է թուրքերեն, անգլերեն, ռուսերեն, հայերեն և արաբերեն տարաբնույթ աղբյուրների ու գրականության հիման վրա: Ուսումնասիրությանը զգալիորեն նպաստել են քննարկվող թեմային առնչվող հայ և օտարազգի հետազոտողների աշխատությունները, հոդվածները, ինչպես նաև երկու պետությունների պաշտոնական փաստաթղթերը, քաղաքական գործիչների հուշերն ու հայտարարությունները: Ուսումնասիրության համար որպես սկզբնաղբյուրներ են ծառայել ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվները, երկու պետությունների արտգործնախարությունների, ինչպես նաև Թուրքիայի էկոնոմիկայի նախարարության պաշտոնական փաստաթղթերը, տեղեկագրերը, հրապարակումները և այլն[1]: Որպես սկզբնաղբյուրներ օգտագործվել են նաև ամերիկյան մի շարք տեղեկագրային հրատարակություններ, ինչպես օրինակ "Human Rights Watch" և "Anti-Defamation League" կազմակերպությունների զեկույցները[2]:

Ատենախոսությունում օգտագործվել են թուրք մի շարք հեղինակների և պաշտոնյաների մենագրությունները, հոդվածներն ու զեկույցները: Դրանցից կարող ենք նշել Է.Յըլմազի, Ս.Էրքմենի, Չ.Էրհանի ու Օ.Քյուրքչուօղլուի, Մ.Ալթունըշըքի, Ք.Օքեի, Ա.Բալջըի, Զ.Օնիշի, Ա.Արսլանի, Հ.Յավուզի, Ս.Բոլուքբաշիի, Հ.Էրդեմիրի, Է.Բարըշի, Տ.Օղուզլուի, Ք.Քիրիշչիի, Հ.Ջեմալի, Գ.Օզջանի, Ս.Սայարիի, Ք.Փամուքչուի, Ա.Սեվերի, Գ.Բաջըքի, Դ.Սեզերի, Ս.Դեմիրելի, Բ.Էջևիթի և այլոց հոդվածներն ու աշխատությունները[3]:

---

[1] ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արխիվ, Обзор Турецкой Прессы, май-июнь 1948 г., Отклики турецкой печати на образование государства Израиль; ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արխիվ, Обзор Турецкой Прессы июнь 1967 г., Бюллетень материалов из прессы, // Вопросы внешней политики, "Хюррие" 6.6.1967; "Turkey's Political Relations with the Palestinian National Authority," *Offical website of the Ministry of Foreign Affairs of Turkey*. http://www.mfa.gov.tr/turkey_s-political-relations-with-the-palestinian-national-authority.en.mfa; "Relations between Turkey and Israel," Offical website of the Ministry of Foreign Affairs of Turkey. http://www.mfa.gov.tr/relations-between-turkey-and-israel%20.en.mfa; "Türkiye-İsrail Serbest Ticaret Anlaşması," Türkiye Cumhuriyeti Economi Bakanlığı // Serbest Ticaret Anlaşmaları. http://www.ekonomi.gov.tr/sta/index.cfm?sayfa=DA1539F8-D8D3-8566-4520A88EF50D677A; "Elections in Israel May 1999-Special Update," Offical website of MFA of Israel, 20 May 1999, http://mfa.gov.il/MFA/AboutIsrael/History/Pages/Elections%20in%20Israel%20May%201999%20-%20Special%20Update.aspx.

[2] Human Rights Watch, "Weapons Transfers and Violations of the Laws of the War in Turkey," New-York, November 1995, http://www.hrw.org/legacy/reports/1995/Turkey.htm; "ADL Presents Prime Minister Of Turkey With Distinguished Statesman Award," Website of ADL, http://archive.adl.org/presrele/Mise_00/3082-00.asp.

[3] Yılmaz E., M., "Soğuk Savaş sonrası dönemde Türkiye-İsrail ilişkilerini," Akademik Orta Doğu, Cilt 4, Sayı 2, 2010; Erkmen S., "1990'lardan Günümüze Türkiye-İsrail Stratejik İşbirliği,"

Թեմայի հետազոտության համար կարևոր է նաև Ա. Դավութօղլուի «Ստրատեգիական խորություն. Թուրքիայի միջազգային դրությունը» մենագրությունը, Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնահարցերի վերաբերյալ Եգիպտոսում նրա տված հարցազրույցը, որը տեղադրված է Թուրքիայի ԱԳՆ պաշտոնական կայքում, ինչպես նաև "Aksiyon" ամսագրում հրատարակած նրա հոդվածը[4]: Աշխատանքի պատրաստման հարցում մեծ

Uluslararası İlişkiler, Cilt 2, Sayı 7, 2005; Erhan Ç., Kürkçüoğlu Ö.,"Arap Olmayan Ülkelerle İlişkiler," ed. Baskın Oran, Türk Dış Politikası Kurtuluş Savaşından Bugüne Olgular, Belgeler,Yorumlar, Cilt I, İstanbul: İletişim, 2001; Öke K. M., Siyonizm'den Uygarlıklar Çatışmasın Filistin Sorunu, Istanbul, Ufuk kitapları, 2002; Balcı A. "Türkiye'nin Dış Politikası ve İsrail: 1990'lar ve 2000'lere İlişkin Bir Karşılaştırma," Ortadoğu Etütleri, Cilt 2, Sayı 2, Ocak 2011; Arslan A., Avrupa'dan Türkiye'ye Yahudi Göçünün Stratejik Olarak Kullanılması (1880-1920), Güvenlik Stratejileri Dergisi, 2007,(5); Altunisik M., "The Turkish-Israeli Rapprochment in the Post-Cold War Era", Middle Eastern Studies, Vol.36, №2, Apr.2000; Öniş Z., "Turkey in the post-cold war era: in search of identity", Middle East Journal, vol. 49, № 1, Winter 1995; Bolukbasi S., "Behind the Turkish-Israeli Alliance: A Turkish View," *Journal of Palestine Studies*, Vol. 29, № 1 (Autumn, 1999); Erdemir H., "How worthy Israeli Relations for Turkey?", Turkish Journal of International Relations, Vol. 9, № 2, Summer 2010; Oguzlu H. T., "The Clash of Security Identities: The Question of Turkey's Membership in the European Union," International Journal, Vol. 57, № 4 (Autumn, 2002); Barış E., "Türkiye Üzerindeki Sovyet Talepleri ve Türk-Sovyet lişkileri (1939-1947)", Uluslararası Sosyal Araştırmalar Dergisi, Vol. 3/11, 2010; Kirişçi K., "Post Cold-War Turkish Security and the Middle East" Paper prepared for the Conference on Israel and Turkey Current Politics and Foreign Policy, Tel Aviv, BESA Center, 14-15 January 1997; Sayari S., "The Changing European Security Environment and the Gulf Crisis," Middle East Journal, Vol. 46, № 1 (Winter, 1992); Bengio O., Özcan G., "Old Grievances, New Fears: Arab Perceptions of Turkey and Its Alignment with Israel," Middle Eastern Studies, Vol. 37, №2, Apr., 2001; Yavuz H. M.., "Turkish-Israeli Relations Through the Lens of the Turkish Identity Debate" Journal of Palestine Studies, Vol. XXVII, № 1, Autumn 1997, Issue 105; Kürkçüoğlu Ö., "Turkiye'nin Arap Ortadoğu'suna Karşı Politikası (1945-1970)," Ankara 1973; Cemal H., "Ortaduğu'da Türikye..." (Turkey in the Middle East), Sabah, 5 Dec. 1997; Pamukcu K., "Water-Related Cooperation Between Turkey and Israel", Meria news, Issue 10, September 1997, http://meria.idc.ac.il/books/water-coop.html; Sever A., "Turkey and the Syrian-israeli Peace Talks in the 1990s," Middle East Review of International Affairs, Vol. 5, № 3, September 2001; Sezer D., "Turkey's Gand Strategy Facing a Dillema," International Spectator, Vol.27, №1, January-March 1992; Bacik G., "The Limits of an Alliance: Turkish-Israeli Relations Revisited," ASQ, Vol. 23, №3, Summer 2001; Demirel S., "Turkey: A Role Model at Turbulent Crossroads," prepared by Ozturk S., Washington Institute for Near East Policy, Policy Watch #387: Special Forum Report, Apr. 30, 1999. http://www.washingtoninstitute.org/policy-analysis/view/turkey-a-role-model-at-turbulent-crossroads; Ecevit B., "An Address by the Turkish Prime Minister," prepared by Onar L., Washington Institue for Near East Policy, Policy #412, October 4, 1999. http://www.washingtoninstitute.org/policy-analysis/view/an-address-by-the-turkish-prime-minister.

[4] Davutoğlu A., "Stratejik Derinlik: Türkiye'nin Uluslararası Konumu," İstanbul, 2008; Davutoğlu A., "Daralan bölgesel kıskaç ve Türk dış politikası: Türkiye'deki iç siyasi bunalım derinleştikçe dış

կարևորություն են ունեցել թուրք-իսրայելական ռազմավարական հարաբերությունների «ճարտարապետներից» մեկի՝ 1990-ական թթ. Թուրքիայի Գլխավոր շտաբի պետի տեղակալ Չ.Բիրի և հրեա հետազոտող Մ.Շերմանի գիտական հոդվածը, ինչպես նաև թուրք պատմաբան Բ.Օրանի խմբագրությամբ «Թուրքական արտաքին քաղաքականությունը» եռահատորյակի երկրորդ հատորի նյութերը[5]:

Արևմտյան հեղինակներից հիշատակման արժանի են Ք. Վոլցի, Վ. Քուանդթի, Ա. Գրեշի, Մ. Մունեյի, Ֆ. Ռոբինսի, Դ. Փայփսի, Ս. Մեյոլլի, Բ. Ֆրանկելի, Թ. Սվիգգի, Լ. Սքոթի, Ա. Մանգոյի, Հ. Կրամեր, Ջ. Քալաբրեսեի, Ջ. Սպայերի, Գ. Բարրիսի և այլոց մենագրությունները, ուսումնասիրություններն ու հոդվածները[6]: Բրիտանական “The Independent” թերթի լրագրող ու փորձագետ Ռ. Ֆիսկն իր «Թշնամի արաբներին լրտեսելու գործում Երուսաղեմը ներգրավում է

---

politikadaki kıskaç da daralmaktadır,” Aksiyon, Sayı: 975, 22-06-1996, http://www.aksiyon.com.tr/aksiyon/columnistDetail_getNewsById.action?newsId=1590; Interview by Mr. Ahmet Davutoğlu published in AUC Cairo Review (Egypt) on 12 March 2012. http://www.mfa.gov.tr/interview-by-mr_-ahmet-davuto%C4%9Flu-published-in-auc-cairo-review-_egypt_-on-12-march-2012.en.mfa.

[5] Bir Ç., Sherman M., “Formula for Stability: Turkey Plus Israel,” *Middle East Quarterly*, Fall 2002; “Türk Dış Politikası, Kurtuluş Savaşından Olgular, Belgeler, Yorumlar”, ed. Baskın Oran, Cilt II, (1980-2001), İstanbul, İletişim yayınları 2002.

[6] Waltz K., “Reflections on Theory of International Politics: A Response to my Critics,” // Neorealism and its Critics//, ed. Robert Keohane, New York: Columbia University Press, 1986; Waltz K. “Theory of International Politics”, Addison-Wesley Pub. Co., 1979; William B. Quandt, “Peace Process: American Diplomacy and the Arab-Israeli Conflict since 1967,” Third Edition, Washington D.C., 2005; Gresh A., "Turkish-Israeli-Syrian Relations and Their Impact on the Middle East," The Middle East Journal, Vol. 52, № 2, Spring 1998; Mooney M. “Unted States History 1959-1962: On the Brink: From the Bay of Pigs to the Cuban Missile Crirs,” University of California, 2006; Robins P., “Turkey and the Middle East,” New York, USA: The Royal Institute of International Affairs, Council of Foreign Relations Press, 1991; Pipes D., “A New Axis: The Emerging Turkish-Israeli Entente,” National Interest, №50, Winter 1997/98; Mayall S. V., “Turkey: Thwarted Ambition,” McNair Paper 56, Institute for National Strategic Studies, Washington, D.C., 1997; Twigge S., Scott L., “The Other Other Missiles of October: The Thor IRBMs and the Cuban Missile Crisis,” Institute of Historical Research, University of London /Electronic Journal of International History, 2012; Mango A., “Turkey and the Enlargement of the European Mind,” Middle Eastern Studies, Vol. 34, № 2 (Apr., 1998); Kramer H., “A Changing Turkey: Challenges to Europe and the United States,” Washington, 2000; Calabrese J., “Turkey and Iran: Limits of a Stable Relationship,” British Journal of Middle Eastern Studies, Vol. 25, №1, May, 1998; Spyer J., “The Impact of the Iraq War on Israel's National Security Conception,” Middle East Review of International Affairs, Vol. 9, №4, December 2005; Burris G. A., “Turkey-Israel: Speed Bumps,” Middle East Quarterly, Vol. 10, № 4, Fall 2003, http://www.meforum.org/569/turkey-israel-speed-bumps.

թուրքերին» վերատառությամբ հոդվածում[7] լուսաբանում է այն, որ 1980-ական և 1990-ական թթ. ԱՄՆ-ի հրեական կազմակերպությունները մեծապես սատարում էին Թուրքիային հակահայկական քաղաքականության՝ մասնավորապես Հայոց ցեղասպանության միջազգայնացումը խոչընդոտելու հարցում[8]: Թուրք-իսրայելական հարաբերությունների ուսումնասիրության բնագավառում արժեքավոր է ամերիկացի գիտնական Ռ.Օլսոնի «Թուրքիայի հարաբերություններն Իրանի, Սիրիայի, Իսրայելի և Ռուսաստանի հետ 1991-2000 թվականներին. քրդական ու իսլամական հիմնախնդիրները» մենագրությունը[9]: Սույն աշխատության մեջ հեղինակը ժամանակագրական հաջորդականությամբ հանգամանալիորեն ներկայացնում է 1990-ական թթ. ընթացքում թուրք-իսրայելական հարաբերությունների զարգացման դինամիկան: Ատենախոսության շարադրմանը մեծապես նպաստել են նաև Վաշինգտոնի մերձավորարևելյան ինստիտուտի հոդվածներն ու հրապարակումները[10]: Հետազոտական այդ ինստիտուտի փորձագետներից մասնավորապես հիշարժան են հրեա հետազոտող Ա.Մակովսկու և թուրք փորձագետ Ս.Քազափթայի վերլուծությունները[11]:

---

[7] Fisk R., "Jerusalem Draws in the Turks to Spy on Arab Foes", The Independent of London, Beirut, February 1999, http://www.flw.ugent.be/cie/Palestina/palestina36.htm.

[8] Ibid.

[9] Olson R., "Turkey's Relations with Iran, Syria, Israel and Russia, 1991-2000: The Kurdish and Islamist Questions," California, 2001.

[10] Oymen O., "Turkish Foreign Policy: Current Challenges," prepared by Saiontz G., *Washington Institute for Near East Policy*, PolicyWatch #238, February 27, 1997. http://www.washingtoninstitute.org/policy-analysis/view/turkish-foreign-policy-current-challenges; Demirel S., "Turkey: A Role Model at Turbulent Crossroads," prepared by Ozturk S., Washington Institute for Near East Policy, Policy Watch #387: Special Forum Report, Apr. 30, 1999. http://www.washingtoninstitute.org/policy-analysis/view/turkey-a-role-model-at-turbulent-crossroads; Kohen S., Robins P., "Turkey and Europe: Integration or Alienation?" Washington Institute for Near East Policy, Policy Watch #329, August 4, 1998; Orbach B., Makovsky A., "Ecevit's Turkey: Foreign and Domestic Prospects," Washington Institute For Near East Policy, Policywatch #398, July 16, 1999; Altunışık M. B., "Turkish Policy Toward Israel," ed. by Makovsky A. and Sayari S., "Turkey's New World: Changing Dynamics in Turkish Foreign Policy," Washington Institute for Near East Policy, 2000; Pipes D., "Syria Beyond the Peace Process," The Washington Institute for Near East Policy, Washington D.C., 1996; "Timeline of Turkish-Israeli Relations, 1949-2006," The Washington Institute for Near Policy, https://app.box.com/shared/8r04vks4li; Eisenstadt M. "Turkish-Israeli Military Cooperation: An Assessment," The Washington Institute for Near East Policy, PolicyWatch #262, July 24, 1997; Mufti M., "Turkish-Syrian Rapprochement: Causes and Consequences," The Washington Institute for Near Policy, Policywatch № 630, June 21, 2002.

[11] Makovsky A., "Turkish-Israeli Cooperation, the Peace Process, and the Region," Washington Institute for Near East Policy, Policy Watch #195, April 26, 1996. http://www.washingtoninstitute.org/policy-analysis/view/turkish-israeli-cooperation-the-peace-process-and-the-region; Makovsky A., "Turkey and the European Union: One More Try,"

Հայ հեղինակներից սույն աշխատության համար օգտագործվել են Ռ.Սաֆրաստյանի, Ս.Մինասյանի, Ն.Հովհաննիսյանի, Լ.Հովսեփյանի, Վ.Տեր-Մաթևոսյանի, Վ.Բայբուրդյանի, Ռ.Կարապետյանի, Ք.Մելքոնյանի, Ա.Փաշայանի արժեքավոր հոդվածներն ու աշխատությունները, որոնցում անդրադարձ կա Թուրքիայի արտաքին քաղաքական հիմնահարցերին և Իսրայելի հետ հարաբերություններին[12]:

Իսրայելցի և առհասարակ հրեա գիտնականների ու փորձագետների մի ստվար զանգված ևս անդրադարձել է թուրք-իսրայելական հարաբերություններին: Սույն աշխատությունը գրելիս օգտվել ենք նաև

Washington Institute for Near East Policy, Policy Watch #427, December 9 1999. http://www.washingtoninstitute.org/policy-analysis/view/turkey-and-the-european-union-one-more-try; Makovsky A., Çandar C., Inbar E., "The Turkish-Israeli-Syrian Triangle," The Washington Institute for Near East Policy, PolicyWatch №249: Special Forum Report, March 15, 2000; Makovsky A., "The New Activism in Turkish Foreign Policy," The Washington Institute for Near East Policy, SAIS Review, vol. 19, Number 1 Winter-Spring 1999; Makovsky A., "Turkish-Israeli Ties in the Context of Israeli-Arab Tension," The Washington Institute for Near East Policy, PolicyWatch №502, November 10, 2000; Makovsky A., "Tansu Ciller in Israel: Pursuing Turkish-Israeli Partnership," The Washington Institute for Near East Policy, PolicyWatch № 134, November 3, 1994. http://www.washingtoninstitute.org/policy-analysis/view/tansu-ciller-in-israel-pursuing-turkish-israeli-partnership; Makovsky A., "Israeli-Turkish Cooperation: Full Steam Ahead," The Washington Institute for Near East Policy, PolicyWatch №292, January 6, 1998, http://www.washingtoninstitute.org/policy-analysis/view/israeli-turkish-cooperation-full-steam-ahead; Makovsky A., "Ecevit's Turkey: Foreign and Domestic Prospects," The Washington Institute for Near East Policy, PolicyWatch №398, July 16, 1999; Makovksy A., "Syrian-Israeli Negotiations and Turkey," The Washington Institute for Near East Policy, PolicyWatch №236, December 17, 1999; Cagaptay S., "The Turkish Prime Minister Visits Israel: Whither Turkish-Israeli Relations?", The Washington Institute for Near Policy, Policy №987, April 27 2005, http://www.washingtoninstitute.org/policy-analysis/view/the-turkish-prime-minister-visits-israel-whither-turkish-israeli-relations.

[12] Սաֆրաստյան Ռ. «Թուրքիան և Կիպրոսյան հիմնախնդիրը. «Մեծ խաղի» դրվագներ», *21-րդ ԴԱՐ*, թիվ 2 (12), 2006 թ.; Սաֆրաստյան Ռ., «Ռուսաստանը և Թուրքիան Հարավային Կովկասում. աշխարհառազմավարական զինադադա՞ր», «21-րդ ԴԱՐ», թիվ 4 (10), 2005 թ.; Минасян С., "Стратегическое сотрудничество Израиля и Турции в контексте проблем региональной безопасности", «21-րդ ԴԱՐ», № 2(4), Ереван 2004; Минасян С., "Современное состояние израильско-турецкого военно-политического сотрудничества", «21-й ВЕК», № 1(5), Ереван 2007; Հովհաննիսյան Ն., «Արաբական երկրների պատմություն», հատոր 4, Երևան 2007 թ.; Հովսեփյան Լ., «Թուրքիայի զինված ուժերի արդիականացումն ու ռազմա-արդյունաբերությունը», Երևան 2010; Տեր-Մաթևոսյան Վ., «Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում (1970-2001 թթ.)», Երևան 2008; Բայբուրդյան Վ., «Իրանի պատմություն», Երևան 2005; Մելքոնյան Ք., «Իսրայել պետության ստեղծումը և թուրքական մամուլի արձագանքը (1948 թ.)», Մերձավոր Արևելք, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, հոդվածների ժողովածու № 7, Երևան 2011; Կարապետյան Ռ., «Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն», Երևան 2003; Փաշայան Ա., «Թուրքիա-Իրաք հարաբերությունների շուրջ», *Նորավանք հիմնադրամ*, 21.01.2010:

Օ.Բենգիոյի «Թուրք-իսրայելական հարաբերությունները. Մերձավոր Արևելքի կողմնակի պետությունների փոփոխվող կապերը» մենագրությունից[13], որտեղ հեղինակը բացի սեփական վերլուծություններից ու հսկայական փաստագրական տեղեկություններից, ներկայացրել է նաև ինչպես Թուրքիայի, այնպես էլ Իսրայելի պաշտոնական շրջանակների բացառիկ հարցազրույցները, որոնք վերցրել է անձամբ հեղինակը: Մենագրությունն աչքի է ընկնում նաև այն առումով, որ դրանում ներկայացված են երկկողմ կապերի վերաբերյալ իսրայելական արխիվային նյութեր: Հրեա գիտնականներից հիշատակման արժանի են նաև Է.Ինբարի, Ա.Նաչմանիի, Գ.Ֆուլերի, Ա.Կոհենի, Ս.Սամուելի, Ս.Կոհենի, Ա.Բեն-Մեիրի, Շ.Փայնի և այլոց աշխատությունները[14]:

Ատենախոսության մեջ օգտագործվել են նաև իսրայելցի որոշ պաշտոնյաների հրապարակումներ և աշխատություններ: Դրանցից ուշագրավ է հայտնի քաղաքական գործիչ Շ.Պերեսի և հրեա գիտնական Ա.Նոարի 1993 թ. հրատարակած «Նոր Մերձավոր Արևելք» խորագիրը կրող գիրքը, որում

---

[13] Bengio O., “The Turkish–Israeli relationship: Changing ties of Middle Eastern outsiders,” New York, 2004.

[14] Inbar E., “The Resilience of Israeli-Turkish Relations,” Israel Affairs, Vol.11, № 4, October 2005; Inbar E., Sandler Sh., “The Changing Israeli Strategic Equation: Toward a Security Regime,” Review of International Studies, Vol. 21, №1, Jan., 1995; Inbar E., “Contours of Israel's New Strategic Thinking”, Political Science Quarterly, Vol. 111, №1, Spring 1996; Inbar E. “Regional Implications of the Israeli-Turkish strategic partnership,” Middle East Review of International Affairs, Vol. 5, №2, Summer 2001; Inbar E., “Israeli National Security, 1973-96,” Annals of the American Academy of Political and Social Science, Vol. 555, Israel in Transition (Jan., 1998); Makovsky A., Çandar C., Inbar E., “The Turkish-Israeli-Syrian Triangle,” The Washington Institute for Near East Policy, PolicyWatch №249: Special Forum Report, March 15, 2000; Inbar E., “The Israeli–Turkish Entente,” University of London, 2000; Nachmani A., “Turkey in the Wake of the Gulf War: Recent History and its Implications,” Journal of Modern Hellenism, Vol. 15, 1999. http://www.biu.ac.il/SOC/besa/books/42pub.html; Nachmani A., “The Remarkable Turkish-Israeli Tie,” Middle East Quarterly, Vol 5, № 2, June 1998; Nachmani A., “A Triangular Relationship: Turkish Israeli Cooperation and its Implications for Greece,” Cahiers d’études sur la Méditerranée orientale et le monde turco-iranien, № 28, 1999; Nachmani A., “Israel, Turkey and Greece,” London, UK: Frank Cass, 1987; Fuller G., “Turkey’s Strategic Model: Myths and Realities,” The Washington Quarterly 27:3, Summer 2004; Fuller G., “From Eastern Europe to Western China: The Growing Role of Turkey in the World and Its Implications for Western Interests,” Santa Monica: RAND, 1993; Fuller G., “The New Turkish Republic: Turkey as a Pivotal State in The Muslim World,” United States Institute of Peace, Washington, 2008; Cohen A., ‘’Israel and the Arab World”, New York, Funk & Wagnalls, 1970; Samuel S., “The Iranian Triangle: The Secret Relations between Israel-Iran-USA”, Tel Aviv, Sifriyat Ma‘ariv, 1981; Kohen S., Robins P., “Turkey and Europe: Integration or Alienation?” Washington Institute for Near East Policy, Policy Watch #329, August 4, 1998. http://www.washingtoninstitute.org/policy-analysis/view/turkey-and-europe-integration-or-alienation; Ben-Meir A., “The Israeli-Syrian Battle for Equitable Peace,” Middle East Policy, Vol.3, № 1, 1994; Shawn M. Pine, “Israel's Security and the Peace Process,” Freeman Center for Strategic Studies, http://www.mefacts.com/cached.asp?x_id=10196.

հեղինակներն անդրադառնում են մերձավորարևելյան հիմնախնդիրներին, ջրի հիմնահարցին, արաբա-իսրայելական հակամարտությանը և այլն[15]: Ատենախոսության մեջ անդրադարձ է կատարվում նաև Հայոց ցեղասպանության վերաբերյալ այդ շրջանում Իսրայելի ԱԳ նախարար Շ. Պերեսի կողմնակալ կարծիքին, որը տեղադրված է Թուրքիայի ԱԳՆ պաշտոնական կայքում[16]: Հիշատակման է արժանի նաև իսրայելցի հայտնի քաղաքական գործիչ Մ.Դայանի «Իմ կյանքի պատմությունը. ինքնակենսագրություն» խորագրով մենագրությունը[17]:

Մի շարք ռուս հեղինակներ՝ Ն. Կիրեևը, Ի. Իվանովան, Բ. Պոցխվերիան, Ե. Կոնովիչը, Օ. Վոլովիչը, Ա. Կորիցկիյը, Վ. Ախմեդովն իրենց ուսումնասիրություններում ևս տարբեր առումներով անդրադարձել են Թուրքիայի ու Իսրայելի արտաքին քաղաքականությանը և երկկողմ հարաբերություններին[18]: Մասնավորապես ռուս հեղինակներից Ն.Կիրեևն իր «Թուրքիա և Իսրայել. ռազմավարական դաշնակիցներ Մերձավոր Արևելքում» հոդվածում բավական հարուստ փաստերով ներկայացնում է երկու պետությունների միջև զարգացող հարաբերությունները 1994-1997 թթ.[19]:

Թեմայի հետազոտությանը մեծապես նպաստել են նաև արաբ հեղինակներ Յուսուֆ Ի. Ջահմանիի, Ա. Սիռի ալ-Դինի, Հ. Յաֆուզի, Մ. Շուդուդի, Մ. Նուր ալ-Դինի, Ա. Նուրի ալ-Նայիմի մենագրություններն ու տարաբնույթ աշխատությունները[20]: Հաշվի առնելով մի շարք վերլուծաբանների՝

---

[15] Peres S., Naor A., “The New Middle East,” New York 1993.

[16] “Israeli Foreign Minister Shimon Peres' Statement on so-called Armenian genocide,” *Offical website of MFA of Turkey*. http://www.mfa.gov.tr/israeli-foreign-minister-shimon-peres -statement-on-so-called-armenian-genocide.en.mfa

[17] Dayan M. “Story of My Life: An Autobiography,” New York, 1976.

[18] Киреев Н. Г., “История Турции XX век”, *Институт востоковедения РАН*, Москва 2007; Иванова И.И., Израильско-турецкие отношения и проблемы региональной безопасности / Иванова И.И. / / Ближний Восток: проблемы региональной безопасности - М.: Институт изучения Израиля и Ближнего Востока, 2000; Поцхверия Б. М., “Внешняя политика Турции после второй мировой войны”, Москва, 1976; Волович О. “Новые отношения Турции с Арабами: Останется ли место для Израиля? // под редакцей Н.Ю.Ульченко, Турция в новых геополитических условиях // 2004; Корицкий А. А., “Турецко-Израильские отношения: Взгляд из Анкары,” Азия и Африка сегодня, №5, 2012; Конович Ф.Е., “Турецко-израильские отношения в 90-е годы,” // Востоковедный сборник. – М., 2002; Ахмедов В., Противостояние // Азия и Африка сегодня, №1, 2000; Марьясис Д. А., “ВПК Израиля на рубеже веков,” Востоковедный сборник. Вып.3 // Отв. ред. Федорченко А.В., Филоник А. О. ИИИБВ: Москва 2002.

[19] Киреев Н. Г., Турция и Израиль – Стратегические союзники на Ближнем Востоке (хроника военно-политического сотрыдничество в 1994-1997 гг.), / Киреев Н. Г., // Ближний Восток и современность, № 5, 1998.

[20] يوسف ابراهيم الجهماني، تركيا و إسرائيل، دمسق، 1999،

عايدة العلي سريّ الدين، العرب والفرات بين تركيا و إسرائيل، بيروت، 1997،

մասնավորապես արաբ հեղինակների կողմնակալ դիրքորոշումը թուրք-իսրայելական համագործակցության վերաբերյալ՝ հեղինակի կողմից փորձ է կատարվել հնարավորինս համակողմանիորեն և գիտական օբյեկտիվությանը հարիր ներկայացնել իրադարձությունների լուսաբանումը:

Ատենախոսության մշակման ընթացքում օգտագործվել են առցանց գրադարաններ, մի շարք տնտեսական, քաղաքական և հետազոտա-տեղեկատվական կայքեր, ինչպես օրինակ՝ "Jstor"[21] և "Middle East Forum"[22]:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից:

Ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ներկայացված է ատենախոսության գիտական նորույթը, տրվել է հիմնախնդրին վերաբերող սկզբնաղբյուրների ու առկա գրականության տեսությունը:

Առաջին գլուխը՝ «1990-ԱԿԱՆ ԹԹ. ԹՈՒՐՔ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐՆ ՈՒ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ», բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Թուրք-իսրայելական հարաբերությունների զարգացման դինամիկան 1948-1991 թթ.», ամփոփ ներկայացվում է թուրք-իսրայելական հարաբերությունների զարգացման ընթացքը 1948 թ. հրեական պետության կազմավորումից մինչև 1991 թ.: Թուրքիան զարգացման աշխարհիկ մոդելի, արևմտամետ քաղաքականության և արաբական պետությունների հետ ունեցած խնդիրների պատճառով տարածաշրջանում Իսրայելի համար հանդիսանում էր բնական դաշնակից: Սակայն մուսուլմանական Թուրքիայի հասարակությունը մերժում էր Իսրայելի հետ կապերի խորացումը՝ կապված հիմնականում արաբա-իսրայելական հակամարտության հետ, ինչի պատճառով Թուրքիայի ղեկավար շրջանակները հաճախ Իսրայելի հետ հարաբերությունները հասցնում էին խորհրդանշական մակարդակի: Իսրայելի տեսակետից պետության կազմավորումից հետո Թուրքիայի հետ սրետ հարաբերությունների հաստատումը դառնում է հրեական պետության արտաքին քաղաքականության առաջնահերթություններից մեկը, որն իր արտահայտությունը գտավ Իսրայելի առաջին վարչապետ Դավիդ Բեն Գուրիոնի կողմից մշակված Իսրայելի արտաքին քաղաքականության «ծայրամասային ռազմավարության» տեսլականում: Երկար ժամանակ հարաբերությունների զարգացման նախաձեռնող կողմ հանդիսանում

هاكان يافوز، العلاقات التوكية-الإسرائيلية من منظور حول الهوية التركية، أبو ظبي، 2000،

ماجد محمد شدود، التعاون الاستراتيجي بين التركية و الإسرائيل، دمشق، 1998،

محمد نور الدين، "الشرق الأوسط في السياسة الخارجية التركية،" العرب و الاتراك، بيروت، 1993،

احمد نوري النعيمي، الدولة العثمانية و اليهود، بغداد، 1990.

[21] http://www.jstor.org

[22] http://www.meforum.org/about.php

էր Իսրայելը, սակայն Թուրքիան ավելի զուսպ կեցված էր ցուցաբերում և, հասարակական հակազդեցությունից խուսափելով, գաղտնի պահում ստորագրված պայմանագրերը:

Սառը պատերազմի տարիներին թուրք-իսրայելական հարաբերություններում եղել են անկումների և վերելքների շրջաններ: 1948-1980-ական թթ. կարելի է համարել երկու պետությունների հարաբերությունների պասիվ զարգացման շրջան: Մինչև 1980-ական թթ. Թուրքիան փորձում էր իր հարաբերությունները հավասարակշռել մի կողմից Իսրայելի և Արևմուտքի, իսկ մյուս կողմից՝ արաբական (իսլամական) աշխարհի հետ: 1973 թ. արաբա-իսրայելական պատերազմի հետևանքով առաջացած համաշխարհային էներգետիկ ճգնաժամը բացասաբար անդրադարձավ նաև Թուրքիայի վրա, ինչը նպաստեց արաբական աշխարհի, ինչպես նաև Պաղեստինի ազատագրության կազմակերպության (ՊԱԿ) հետ համագործակցության ձևավորմանը: Այդ հանգամանքը, իհարկե, բացասաբար ընկալվեց Իսրայելում: 1980 թ., երբ Իսրայելը մայրաքաղաք հռչակեց Երուսաղեմը, Թուրքիան Իսրայելի հետ դիվանագիտական հարաբերությունները հասցրեց խորհրդանշական մակարդակի: 1980-ական թթ. սկզբին Իսրայելի՝ Լիբանանում վարած քաղաքականությունը և Թուրքիայի տնտեսական խնդիրները նույնպես նպաստեցին երկկողմ կապերի թուլացմանը: Թուրք-իսրայելական հարաբերությունները 1980-1991 թթ. ընթացքում տարածաշրջանային և արտատարածաշրջանային իրադրաձությունների համատեքստում, այդ թվում նաև ASALA-ի դեմ համագործակցության շնորհիվ սկսեցին մեծ փոփոխությունների ենթարկվել, ինչի արդյունքում 1986 թ. վերականգնվեց Թուրքիայի ու Իսրայելի միջև դիվանագիտական հարաբերությունների նախկին մակարդակը:

Երկրորդ ենթագլխում «Արտատարածաշրջանային և տարածաշրջանային զարգացումների ազդեցությունը թուրք-իսրայելական ռազմավարական համագործակցության ձևավորման հարցում», ներկայացված է միջազգային համակարգում տեղի ունեցած գլոբալ փոփոխությունների ազդեցությունը երկկողմ կապերի վրա: Մասնավորապես 1991 թ. ԽՍՀՄ-ի փլուզումից և Մադրիդի խաղաղության բանակցություններից հետո բավականին նպաստավոր պայմաններ էին ստեղծվել Թուրքիայի և Իսրայելի միջև հարաբերությունների զարգացման համար: Միաբևեռ քաղաքական համակարգի պայմաններում որոշակի փոփոխությունների էր ենթարկվել նաև ԱՄՆ-ի քաղաքականությունը մերձավորարևելյան տարածաշրջանում: Թուրքիան ու Իսրայելը ԱՄՆ-ի ու ԵՄ-ի համար կորցրել էին իրենց նախկին ռազմավարական կարևորությունը, ինչը կողմերին դրդում էր գործընկեր փնտրել այլ ուղղությամբ:

Այս ենթագլխում վերլուծության են ենթարկվում նաև տարածաշրջանային այն զարգացումները, որոնք նպաստեցին Թուրքիայի ու Իսրայելի միջև կապերի խորացմանը: Թուրքիայի մասնակցությունը 1990-1991 թթ. Ծոցի պատերազմում ազդարարում էր Թուրքիայի՝ տարածաշրջանային գործերում էլ ավելի ակտիվ

ներգրավվածության մասին: Թուրքիան տարածաշրջանում կայունացնողի դեր էր ստանձնել: Միաժամանակ, Թուրքիայի ու սահմանակից մուսուլմանական պետությունների միջև հարաբերությունները լարված էին՝ կապված քրդական գործոնի, ջրի հիմնախնդրի, արմատական իսլամի ու տարածքային վեճերի հետ: Այդ նույն պետությունների հետ բազմաշերտ տարաձայնություններ ուներ նաև Իսրայելը: Տարածաշրջանային մակարդակում իրենց զսպիչի ուժի կարողությունները մեծացնելու և այդ պետություններին հաջողությամբ դիմագրավելու համար Թուրքիան ու Իսրայելը ձևավորեցին ռազմավարական համագործակցություն:

Երկրորդ գլուխը՝ «ԹՈՒՐՔ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1991-2002 ԹԹ.», բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում «Թուրք-իսրայելական ռազմավարական հարաբերությունների ձևավորման սկզբնական փուլը», ժամանակագրական հաջորդականությամբ ներկայացված է 1991 թ. մինչև 1995 թ. Թուրքիայի ու Իսրայելի միջև հարաբերությունների զարգացման ընթացքը: 1990-ական թթ. Թուրքիայի քաղաքական վերնախավի համար, կարծես թե, ոչ մի խոչընդոտ չկար Իսրայելի հետ երկկողմ հարաբերությունները զարգացնելու համար: Հարաբերությունների խորացման առաջին դրսևորումը եղավ 1991 թ. դեկտեմբերին, երբ Թուրքիան ու Իսրայելը դեսպանների մակարդակով վերականգնեցին դիվանագիտական հարաբերությունները: 1992 թ. սկիզբ դրվեց թուրք-իսրայելական հարաբերությունների հիմնական տարր հանդիսացող ռազմական ոլորտի համագործակցությանը, երբ Իսրայելի պաշտպանության նախարար գեներալ Դավիդ Իվրին ստորագրեց ռազմական համագործակցության համաձայնագիր Իսրայելի ու Թուրքիայի ռազմական արդյունաբերությունների միջև: 1993 թ. Իսրայելի ու ՊԱԿ-ի միջև կնքված Օսլոյի պայմանագիրը հզոր մեկնարկ հանդիսացավ Թուրքիայի ու Իսրայելի հարաբերությունների սերտացման համար: Այդ համաձայնագիրը Թուրքիային հնարավորություն տվեց դիմակայել իսլամական աշխարհի մշտական մեղադրանքներին, որոնց ենթարկվում էր, քանի որ երես էր թեքել պաղեստինյան խնդրից: Մինչև 1995 թ. երկկողմ հարաբերություններ զարգանում էին բավական դինամիկ կերպով: Տեղի էին ունենում մեծ հաճախականությամբ բարձրաստիճան պաշտոնյաների փոխայցեր, որոնց ընթացքում էլ և հիմք էր դրվում երկկողմ բազմաոլորտ համագործակցությանը՝ հարաբերություններին հաղորդելով ռազմավարական բնույթ:

Երկրորդ ենթագլխում «Թուրք-իսրայելական ռազմավարական համագործակցության ամրապնդումը և դրա ազդցությունը տարածաշրջանային գործընթացների վրա», լուսաբանվում է թուրք-իսրայելական հարաբերությունների պատմության ընթացքում կապերի ամենաջերմ շրջանը: 1996-1999 թթ. Թուրքիայի ու Իսրայելի միջև կնքվում են միլիարդավոր ԱՄՆ դոլարների հասնող ռազմական ու ռազմատեխնիկական համագործակցության և այլ ոլորտի պայմանագրեր: Միաժամանակ, ներկայացվում և վերլուծության են

ենթարկվում այն հանգամանքները, որոնցով պայմանվորված էր այն, որ իսլամամետ Բարօրություն կուսակցության իշխանության գալը լրջորեն չխոչընդոտեց երկկողմ կապերի խորացմանը, եթե ոչ հակառակը, և դա այն դեպքում, երբ Նեջմեթթին Էրբաքանը և նրա կուսակիցները խոստանում էին չեղարկել Իսրայելի հետ ցանկացած տեսակի կապ: Այս ժամանակաշրջանում թուրք-իսրայելական ռազմավարական համագործակցությունը կողմերին ծառայեց նաև որպես տարածաշրջանային ազդեցիկ գործոն: Մասնավորապես Թուրքիան «նյութականացրեց» Իսրայելի հետ կապերը, երբ կարողացավ 1998 թ. կասեցնել ինչպես ռուսական S-300 հրթիռների տեղակայումը Կիպրոս, այնպես էլ պատերազմի սպառնալիքի միջոցով Սիրիային ստիպեց, որ վերջինս դադարեցնի PKK-ին ցուցաբերվող աջակցությունը:

Երրորդ ենթագլխում «Թուրք-իսրայելական ռազմավարական հարաբերությունների աստիճանական հետընթացը. մարտահրավերներ ու սահմանափակումներ», ներկայացված է երկկողմ կապերի աստիճանական թուլացման պատճառները: Մեծ արագությամբ զարգացող թուրք-իսրայելական հարաբերությունների առաջընթացը խոչընդոտվեց 2000 թ. սեպտեմբերին, երբ Իսրայելի ապագա վարչապետ Արիել Շարոնն այցելեց Երուսաղեմի ալ-Ակսա (Հարամ ալ-Շերիֆ) մզկիթ: Այն հանգեցրեց պաղեստինցիների կողմից երկրորդ զանգվածային շարժմանը, որը ստացավ երկրորդ Ինթիֆադա անվանումը: Այս իրադարձությունները մեծ հետք թողեցին թուրք-իսրայելական հարաբերությունների զարգացման հետագա ընթացքի վրա: Հասարակական կարծիքի ճնշման արդյունքում Անկարան ստիպված էր հստակ գիծ քաշել Իսրայելի հետ ունեցած իր ռազմավարական շահերի և պաղեստինցիների հետ իր զգայական ինքնության միջև: Բոլոր նախադրյալներից ու դրդապատճառներից գլխավորը հենց արաբա-իսրայելական խաղաղության գործընթացն էր, որը 1990-ական թթ. թուրք-իսրայելական համագործակցությանը տվել էր տրամաբանական հիմնավորում, և այս պատճառով էր, որ խաղաղության գործընթացում ձգձգված և ապարդյուն ջանքերը կարող էին նորից խոչընդոտ հանդիսանալ երկկողմ հարաբերությունների զարգացման տեսանկյունից: Բացի այդ, Թուրքիան այդ շրջանում պետք է հաշվի առներ, որ իր հարևանների՝ գլխավորապես Սիրիայի ու Իրանի հետ հարաբերությունները, որոշակիորեն փոխվել էին դեպի դրականը՝ կապված այդ պետություններում նոր իշխանությունների հաստատման հետ: Մերձավոր Արևելքում տեղի ունեցող այս փոփոխությունների ֆոնի վրա Թուրքիայի տեսանկյունից Իսրայելի հետ համագործակցության միջոցով Սիրիային ու Իրանին նախկինի նման զսպելու անհրաժեշտությունը, կարծես թե, արդեն անտրամաբանական էր, ինչն էլ որոշակի ազդեցություն էր թողնում երկկողմ կապերի վրա: Թուրք-իսրայելական հարաբերությունների համար մեծ փորձություն էր Թուրքիայում 2002 թ. վերջին Արդարություն և զարգացում կուսակցության հաղթանակը խորհրդարանական ընտրություններում: Օրենսդրական դաշտի բարեփոխումներով զգալիորեն նվազեցվեց բանակի՝ հասարակական-քաղաքական գործընթացներին

միջամտելու հնարավորությունը: Քանի որ հիմնականում Թուրքիայի զինվորականությունն էր (սկսած 1990-ական թվականներից) թուրք-իսրայելական ռազմավարական համագործակցության ձևավորման ու ամրապնդման գաղափարախոսը և ջատագովը, ուստի՝ Թուրքիայի քաղաքական կյանքում զինվորական վերնախավի դիրքերի հետագա թուլացման պարագայում Իսրայելի հետ հարաբերությունների խորացման միտումը ևս օբյեկտիվորեն պետք է թուլանար:

Երրորդ ենթագլխում ներկայացված են նաև երկկողմ հարաբերությունների համար պոտենցիալ խոչընդոտ ու սահմանափակում հանդիսացող Թուրքիայի քաղաքական իսլամի, թուրք-իսրայելական համագործակցության նկատմամբ տարածաշրջանային պետությունների դիրքորոշման, հյուսիսային Իրաքում քրդական պետության կազմավորման հարցի շուրջ Թուրքիայի ու Իսրայելի միջև հակասությունների, Պաղեստինյան հիմնահարցի և Հայոց ցեղասպանության խնդրի ազդեցությունները երկկողմ հարաբերությունների վրա: Իրաքի մասնատումը և անկախ քրդական պետության կազմավորումը Թուրքիան համարում էր իր տարածքային ամբողջականության ուղղակի սպառնալիք, իսկ Իսրայելն այս հարցում առնվազն չեզոքություն էր դրսևորում, իսկ որոշ թուրք փորձագետների գնահատականով նույնիսկ նպաստում դրան[23]: Թուրքիայի ու Իսրայելի միջև հարաբերություններում պոտենցիալ խոչընդոտ էր քաղաքական իսլամի գործոնը: Թեև առաջին հայացքից Ն.Էրբաքանի իշխանության օրոք թուրք-իսրայելական համագործակցությունը չտուժեց, այնուհանդերձ այն մեծ մարտահրավեր և փորձություն էր երկկողմ կապերի համար: Թուրքիայում քաղաքական իսլամի վերելքը հակաիսրայելական տրամադրություններ էր ի հայտ բերում հասարակական լայն շերտերի շրջանում: Այն նաև հանգեցրել էր տարածաշրջանային պետությունների ակտիվացմանը, որոնք ձգտում էին Թուրքիայի իսլամական կառավարության միջոցով կասեցնել Թուրքիայի և Իսրայելի միջև խորացող համագործակցությունը: 1990-ական թթ. թուրք-իսրայելական հարաբերություններում շարունակում էր կարևոր գործոն հանդիսանալ նաև Հայոց ցեղասպանության հարցը: Թեև Իսրայելը պաշտոնական մակարդակում հրաժարվում էր Հայոց ցեղասպանության ճանաչումից, Իսրայելում շատերը պնդում էին ճանաչել եղելությունը և հայկական ջարդերը որակել որպես ցեղասպանություն: Այս խորհրդանշական հարցը թուրք-իսրայելական համագործակցությանը վնաս հասցնելու մեծ ներուժ չուներ, բայց այլ խնդիրների հետ միասին այն կարող էր նպաստել կապերի թուլացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ ի մի են բերված ատենախոսության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները:

- Թուրքիան Իսրայելը ճանաչած առաջին մուսուլմանական պետությունն է: Մինչև 1990-ական թթ. երկկողմ հարաբերություններից ավելի մեծ օգուտ

[23] Altunisik M., “The Turkish-Israeli Rapprochment in the Post-Cold War Era”, Middle Eastern Studies, Vol.36, № 2, Apr. 2000, p. 179.

քաղում էր Իսրայելը, և հենց նա էր հանդես գալիս հարաբերությունների զարգացման նախաձեռնությամբ: Սակայն մինչև Սառը պատերազմի ավարտը ակտիվ երկկողմ կապեր չհաստատվեցին ոչ մի ոլորտում, բացի հետախուզական ծառայությունների համագործակցությունից և հարաբերությունների ռազմաքաղաքական կողմից:

• 1990-ական թթ. սկզբին միջազգային քաղաքական համակարգում տեղի ունեցած փոփոխությունների համատեքստում և՛ Թուրքիան, և՛ Իսրայելը Արևմուտքի համար մասամբ կորցրել էին իրենց նախկին կարևորությունը: Այդ բացը լրացնելու համար այս երկու պետություններն աստիճանաբար ձևավորեցին սերտ ռազմավարական համագործակցություն, որը հետագայում ընդգրկեց գրեթե բոլոր բնագավառները:

• Մադրիդում խաղաղության բանակցություններն Անկարային հնարավորություն տվեցին ազատորեն խորացնել կապերն Իսրայելի հետ: 1991 թ. արաբա-իսրայելական խաղաղության գործընթացի ի հայտ գալը չեզոքացրեց Թուրքիայի՝ արաբական պետությունների ու Իսրայելի միջև հավասարակշռություն պահպանելու բարդությունները, որոնք ի հայտ էին եկել մասնավորապես 1960-ական թթ. հետո, և ի չիք դարձրեց Իսրայելի հետ հարաբերությունները բարելավելու «վերջին» պատնեշը:

• Քանի որ 1990-ական թթ. Թուրքիայի ու սահմանակից պետությունների միջև առկա բազմաշերտ խնդիրները լարված բնույթ էին կրում և կարող էին վերածվել զինված ընդհարման, Իսրայելի հետ ռազմավարական համագործակցությունը Թուրքիայի տեսանկյունից նպատակ ուներ նաև զսպել այդ պետությունները: Այդ համագործակցությունը կարող էր դիտվել որպես թուրքական զինված ուժերի առավելություն իր հակառակորդների ուժերի նկատմամբ:

• Իսրայելի հետ սերտ համագործակցություն ձևավորելով՝ Անկարան ձգում էր օգտագործել աշխարհում (առաջին հերթին ԱՄՆ-ի) հրեական լոբբիի կարողությունները: Հրեական լոբբիի աջակցությունը Թուրքիային խիստ անհրաժեշտ էր նաև հայկական ու հունական լոբբիի գործողությունների դաշտը սահմանափակելու և միջազգային հանրության առջև իր «իմիջը» բարձրացնելու տեսանկյունից:

• 1979 թ. Իրանում իսլամական հեղափոխությունից հետո Իսրայելի համար ծայրամասային ռազմավարության շրջանակներում մեծացավ Թուրքիայի դերը, ինչը համընկավ Անկարայի՝ Իսրայելի հետ համագործակցություն ձևավորելու ներքին ու արտաքին մի շարք դրդապատճառների հետ: 1990-ական թթ. Իսրայելի համար ի հայտ էին եկել նոր մարտահրավերներ՝ ահաբեկչություն, արմատական իսլամական խմբավորումներ և «երկրորդ շրջանի» որոշ պետությունների կողմից միջուկային զենք ունենալու ներուժ: Ուստի՝ Իսրայելի «ծայրամասային ռազմավարության» տեսանկյունից Թուրքիայի հետ համագործակցությունը շարունակում էր մնալ կարևոր և կենսական գործոն՝

սեփական պետությունը խարխլելու արաբական ամբիցիաները վերացնելու նպատակով:

• Իսրայելի հետ համագործակցելով՝ Թուրքիան նպատակ ուներ Սիրիայի, Իրաքի ու Իրանի դեմ պայքարի համար ձեռք բերել անհրաժեշտ ռազմական ներուժ, իսկ Իսրայելի համար դա միջոց էր նաև «ստրատեգիական խորության» բացը լրացնելու առումով, քանի որ դա տրամադրում էր նոր տարածք՝ անհրաժեշտության դեպքում Սիրիայի, Իրաքի ու Իրանի վրա հարձակումներ իրականացնելու համար:

• Եթե 1950-ական թթ. վերջին ձևավորված ծայրամասային համագործակցությունը նախաձեռնել, մշակել ու խթանել էր հիմանականում Իսրայելը, ապա 1990-ական թթ. ռազմավարական համագործակցությունը կարելի է համարել Թուրքիայի ու Իսրայելի համատեղ նախագիծ, որում երկու կողմերն էլ հավասարապես նպաստել են միության ձևավորմանն ու զարգացմանը:

• 1990-ական թթ. երկրորդ կեսին թուրք-իսրայելական համագործակցությունը ընդգրկել էր գրեթե բոլոր ասպարեզները, ինչը եզակի երևույթ էր երկկողմ հարաբերությունների պատմության մեջ: Նախկինում ժամանակ առ ժամանակ վերելքներ ու վայրէջքներ ապրող հարաբերությունները թեև մեծ առաջընթաց էին գրանցել ռազմական և հետախուզական առումով, բայց 1990-ական թթ. հենց տնտեսական կապերի այդչափ խորացումն էր, որ ամուր հիմքերի վրա էր դրել Թուրքիայի ու Իսրայելի միջև ռազմավարական համագործակցությունը: 1990-ական թթ. երկրորդ կեսին թուրք-իսրայելական առանցքը հանդիսանում էր տարածաշրջանային ազդեցիկ գործոն:

• Հարաբերությունների մերձեցման գործում իր դերը խաղաց ԱՄՆ-ի քաղաքականությունը, որն ուղղված էր այս երկու պետություններին դարձնել իր աշխարհաքաղաքական հենարանը Միջին և Մերձավոր Արևելքում: ԱՄՆ-ի նպատակն էր ստեղծել նոր ռազմաքաղաքական առանցք՝ դրա միջոցով արաբական աշխարհի որոշ վարչակարգերը զսպելու համար:

• Ո՛չ 1996 թ. հունիսին Բարօրություն կուսակցության կողմից իշխանության ստանձնումը Թուրքիայում, և ո՛չ էլ 1996 թ. մայիսին պահպանողական Լիկուդ կուսակցության հաղթանակն Իսրայելում բացասաբար չանդրադարձան թուրք-իսրայելական կապերի վրա: Ընդհակառակը, երկկողմ հարաբերությունները շարունակում էին էլ ավելի խորանալ, ընդգրկում էին ավելի ընդարձակ ոլորտներ, ինչպես նաև դարձել էին ավելի հանրային:

• Վերլուծելով 1997-99 թթ. թուրք-իսրայելական հարաբերությունների դինամիկան՝ կարելի է այս «դաշինքն» անվանել ավելի շատ ԹՁՈՒ-Իսրայել դաշինք, քան թուրք-իսրայելական դաշինք, քանի որ Թուրքիայի հասարակությունը շարունակում էր կասկածանքով վերաբերվել այդ կապերին, և հասարակության լայն շերտերն աշխարհիկ ղեկավարության՝ Իսրայելի հետ կապված բանավեճերը ընկալում էին ոչ թե արտաքին քաղաքականության տեսանկյունից, այլ այսպես ասած իսլամական սպառնալիքի դեմ նրանց ներքաղաքական պայքարի տեսանկյունից: Ուստի՝ Իսրայելի հետ

հարաբերություններում զինվորականության դերը վնասում էր երկկողմ հարաբերությունների հասարակական լեգիտիմության բնույթը:

• 2000 թ. սկիզբ առած պաղեստինյան երկրորդ ինթիֆադան մեծ հարված հասցրեց թուրք-իսրայելական ռազմավարական համագործակցությանը: Եթե 1990-ական թթ. թուրք-իսրայելական հարաբերությունների սերտացման համար առկա էին մի շարք նախապայմաններ ու դրդապատճառներ, ապա 1990-ական թթ. վերջին և հատկապես 21-րդ դարի սկզբին, այս գործոնները գնալով ենթարկվում էին որակական նոր փոփոխությունների, ինչն ուղիղ համեմատական էր հարաբերությունների զարգացման հակընթաց դինամիկային: Հատկանշական է այն, որ երկկողմ հարաբերությունների համար որքան նվազում էին 1990-ական թթ. առկա նախադրյալներն ու շարժառիթները, այնքան ավելի էին նկատվում հաճախակի սառեցումները երկկողմ հարաբերություններում: 21-րդ դարի սկզբին Թուրքիան նախկինի նման սկսել էր թաքցնել Իսրայելի հետ կնքվող ռազմական պայմանագրերը: Փոխվում էին Թուրքիայի շահերը, որոնցից բխում էր մեծացնել ազդեցությունը տարածաշրջանում իսլամական աշխարհում դիրքերի ամրապնդման ճանապարհով:

• Թուրքիան էր պատասխանատու Իսրայելի հետ հարաբերությունների դրական ու բացասական ընթացքի համար, քանի որ Թուրքիայի ներքաղաքական և տարածաշրջանային հրամայականներն էին, որ ստիպում էին նրան վերանայել Իսրայելի հետ կապերը: Իսրայելում 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին ընտրված կառավարությունների օրոք Թուրքիայի նկատմամբ քաղաքականությունը գրեթե նույնն էր, համաձայն որի Թուրքիան հանդիսանում էր «ծայրամասային պետություն», և որի հետ դաշնակցելը միշտ էլ եղել է Իսրայելի արտաքին քաղաքական առաջնահերթություններից մեկը:

• 21-րդ դարի սկզբին երկու պետությունների ռազմատեխնիկական համագործակցությունը ուներ իր օբյեկտիվ խոչընդոտները և ընդունակ չէր հետագայում ծառայել որպես հիմք քաղաքական հարաբերությունների խորացման և այդ հարաբերություններին հաղորդել ռազմավարական համագործակցության բնույթ: Բնական էր, որ անվտանգության ոլորտի հրամայականները կնպաստեին միջնաժամկետ հեռանկարում կայուն գործընկերության պահպանմանը, սակայն արդեն ի վիճակի չէին լինի դրանք հասցնել դաշնակցայինի:

• Քրդական գործոնը (քրդական անկախ պետության կազմավորումը հյուսիսային Իրաքում) համարվում էր թուրք-իսրայելական հարաբերությունների սահմանափակումներից մեկը, քանի որ Իսրայելն առնվազն դեմ չէր քրդական պետության կազմավորմանը, ինչը Թուրքիան համարում է ազգային անվտանգության սպառնալիք:

• Տարածաշրջանային պետությունների կողմից թուրք-իսրայելական համագործակցությանն ուղղված մարտահրավերները և հակադաշինք ձևավորելու փորձերն ավելի շատ կոչերով ու սպառնալիքներով էին, քան իրական գործողություններով: Հակադաշինքներ այդպես էլ չձևավորվեցին՝

տարածաշրջանային պետությունների միջև հարաբերություններում առկա հակասությունների պատճառով:

- Թուրք-իսրայելական հարաբերություններում 1990-ական թթ. շարունակում էր կարևոր գործոն հանդիսանալ Հայոց ցեղասպանության հարցը: Այս խորհրդանշական հարցը թուրք-իսրայալեկան համագործակցությանը վնաս հասցնելու մեծ ներուժ չուներ, բայց այլ խնդիրների հետ միասին այն կարող էր նպաստել երկկողմ կապերի թուլացմանը:
- 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին թուրք-իսրայելական համագործակցությանն ուղղված բոլոր մարտահրավերներից ավելի շատ աճող քաղաքական իսլամն էր, որ կատալիզատոր դարձավ հարաբերությունների հակադարձ դինամիկայի համար:

Հետազոտության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ գիտական աշխատություններում

1. «Թուրք-իսրայելական հարաբերությունների զարգացման դինամիկան 1980-1991 թթ.», *Արևելագիտության հարցեր*, գիտական հոդվածների ժողովածու, № 7, Երևան 2012, էջ 204-218:
2. «1990-ական թթ. թուրք-իսրայելական ռազմավարական համագործակցության ձևավորման արտատարածաշրջանային նախադրյալներն ու դրդապատճառները», *Արաբագիտական ուսումնասիրություններ*, h. 6, Երևան 2013, էջ 104-121:
3. «Թուրք-իսրայելական հարաբերությունները տարածաշրջանային ու ներքաղաքական գործոնների ազդեցության համատեքստում (2000-2002 թթ.)», *Արաբագիտական ուսումնասիրություններ*, h. 6, Երևան 2013, էջ 122-141:

СААКЯН АЛЕКСАНДР ОВИКОВИЧ

ТУРЕЦКО-ИЗРАИЛЬСКОЕ СТРАТЕГИЧЕСОЕ СОТРУДНИЧЕСТВО В КОНЦЕ 20-ГО И НАЧАЛЕ 21-ГО ВЕКОВ

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02- «Всемирная история».
Защита состаится 30-го мая 2014 г, в. 14:00, на заседании специализированного совета 006 «Всемирная история», действующего при Институте востоковедия НАН РА, по адресу: 0019, г. Ереван, 0019, пр. М. Баграмяна, 24/4.

РЕЗЮМЕ

Диссертация состоит из введения, двух глав, заключения и списка использованной литературы и источников.

Во введении обоснована актуальность темы, цель и задачи, представлена научная новизна, дана теория литературы и первоисточников, касающихся главной задачи.

Турецко-израильские отношения являются важными составляющими международных и региональных отношений. Их исследование имеет как научное, так и политическое значение. Эти отношения всегда были в центре внимания как государств региона, так и мировых держав, учитывая их значение в таком важном регионе, как Ближний Восток. Более чем полувековое сотрудничество между двумя государствами охватывало примерно все сферы: политический, социально-экономический и военный, при том военная сфера являлась ведущей особенно в конце 20-го и начале 21-го веков. В 1990-ые гг. между Турцией и Израилем сформировалось тесное стратегическое сотрудничество, целью которого было противостоять ряду региональных и внерегиональных вызовов после окончания Холодной войны. Двусторонное сотрудничество почти во всех сферах, в особенности в военно-технической сфере, дало возможность Турции и Израилю увеличить потенциал сдерживающей силы на Ближнем Востоке. После окончания Холодной войны появившиеся в регионе вызовы безопасности: радикальный ислам, появление государств, имеющих потенциал создать оружия атомного и массового уничтожения, терроростическая угроза и т.д. обе страны считали явлениями, угрожающие их национальной безопасности и даже территориальной целостности, следовательно они усатновили свою безопасность общим знаменателем.

В первой главе “Предпосылки и мотивы формирования турецко-израильского стратегического сотрудничества в 1990-ые гг”, представлен процесс развития турецко-израильских отношений с начала образования Еврейского государства в 1948 г. до 1991 г. В турецко-израильских отношениях были и падения и подъемы. Период между 1948 - 1980-х гг. можно рассматривать как период пассивного развития отношений между двумя странами. В первой половине 1980-х

гг. отношения между двумя государствами были холодны из-за политики Израиля в Ливане и экономических проблем в Турции. В сентябре 1980 г. Кнессет объявил, что Иерусалим является столицей Израиля. По этой причине 3 декабря 1980 г., Турция официально заявила, что сокращает свои дипломатические отношения с Израилем до самого низкого, символического уровня. Турция также не хотела терять свое сотрудничество с арабскими странами. Однако, снижение нефтяных доходов, начиная с середины 1980-х годов, потеряло свою привлекательность в области турецких предприятий. Кроме того, курдская проблема и проблема воды уже напрягали отношения Турции с ее ближневосточными соседями в 1980-х годах. Во второй половине 1980-х годов и первой половине 1990-х годов отношения между Турцией и Израилем постепенно начали улучшаться.

В первой главе представлено также воздействие глобальных изменений, произошедших в международной систме, на двусторонние отношения, а также формирование благоприятных условий для развития между Турцией и Израилем отношений после распада СССР в 1991 г. и мирных переговоров Мадрида. Одновременно в первой главе подвергаются анализу территориальные развития, способствовавшие углублению связей между Турцией и Израилем в 1990 гг.

Во второй главе “Турецко-израильское стратегическое сотрудничество в 1991-2002 гг.”, в хронологическом порядке представлен процесс отношений между Турцией и Израилем начиная с 1991 по 2002гг. Первое проявление углублений этих отношений наметилось в декабре 1991 г., когда Турция и Израиль восстановили дипломатические отношения на уровне послов. До 1995 г. двусторонние отношения развивались достаточно динамично. Увеличилось число израильских туристов, посещающих Турцию. Развивалось сотрудничество в военно-стратегической сфере. Происходили частые визиты высокопоставленных официальных лиц обеих стран, в течение которых и были заложены основы двустороннего многоаспектного сотрудничества, придавая отношениям стратегический характер.

Во второй главе освещается самый «теплый» период отношений в истории турецко-израильских отношений (1996-1999гг.). В 1996-1997 гг. Между Турцией и Израилем были подписаны военные, военно-технические и разноаспектные договоры, доходящие приблизительно до миллиарда долларов США. Одновременно представляются и подвергаются анализу обстоятельства, обуславливающие тот факт, что приход ко власти происламистской партии Благополучие не оказал серьезного препятствия на углубление двусторонних связей. Во второй главе рассматриваются также причины постепенного ослабления двусторонних связей в течение 2000-2002гг. В данной части диссертации освещаются также факторы, являющиеся потенциальным препятствием и ограничением для двусторонних отношений.

В заключении обобщены основные результаты и заключения диссертации. Рассматривая характер и динамику развития двусторонних отношений, можно

прийти к заключению, что эти отношения фактически были связаны с региональной конъюнктурой, внерегиональным политическим положением, общими интересами и отношением двух стран ко всему этому.

ALEKSANDR H. SAHAKYAN

TURKISH-ISRAELI STRATEGIC COOPERATION AT THE END OF 20TH CENTURY AND THE BEGINNING OF 21ST CENTURY.

The defense of the dissertation will take place at 14:00, on the 30th of May of 2014, the meeting of the Specialized Council 006 "World History" at the Institute of Oriental Studies of the NAS RA.
Address: Yerevan, 0019, M. Baghramyan Ave., 24/4.
The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the Field of "World History" 07.00.02

SUMMARY

The present dissertation consists of an introduction, two chapters, conclusion and a list of references and sources.

In the introduction the relevance of the topic, the purpose and objectives of the study are substantiated as well as the scientific innovation is introduced.

Turkish-Israeli relations are important constituents of international affairs. Their study has both scientific and political meaning. These relations have always been at the centre of the attention of both regional states and the world superpowers, taking into account their core meaning in such a highly explosive and important region as the Near East. The two states have been cooperating with each other for about half a century almost in all spheres - political, socio-economic and military - with military sphere being the leading one especially in 1990s. In those years a close strategic partnership was established between Turkey and Israel to meet a range of regional and extra-regional challenges following the Cold War. Bilateral cooperation in almost all spheres, especially in the military, has enabled Turkey and Israel to increase the possibility of deterrence force in the Middle East. After the Cold War both countries considered the security challenges which had emerged in the region such as radical Islam, the emergence of states having the potential to create nuclear weapons and WMD, the terror threat, etc. as phenomena threatening their national security and territorial integrity. Therefore they chose to define their security in the Middle East region by a common denominator.

The first chapter entitled "Preconditions and motives for the formation of the Turkish-Israeli strategic cooperation in the 1990s" represents the development of Turkish-Israeli relations since the beginning of the formation of the Jewish state in 1948 up to 1991. There were both falls and rises in Turkish-Israeli relations. The period between 1948-1980s can be considered as a period of passive development of relations between the two countries. In the first half of 1980s the relations between the two states

were chilly due to Israel's policy in Lebanon and economic problems in Turkey. In September 1980, the Knesset declared the united and complete Jerusalem was the capital of Israel. On the 3rd of December, Turkey officially declared that it reduced its diplomatic relations with Israel to the lowest, symbolic level. Turkey simply did not want to lose its cooperation with Arabic countries. However, declining oil revenues starting in the mid-1980s decreased the attractiveness of the area for Turkish businesses. Furthermore, the Kurdish problem and the water issue had already strained Turkey's relations with its Middle Eastern neighbours in the 1980s. In the second half of 1980s and the first half of 1990s the relations between Turkey and Israel gradually started to ameliorate.

The first chapter also provides information on the impact of global changes in the international political system on the bilateral relations, as well as on the occurrence of favourable conditions for the development of Turkey-Israel relations, following the collapse of the USSR in 1991 and peace talks in Madrid. Simultaneously, in the first chapter the regional developments which contributed to the reinforcement of relations between Turkey and Israel in 1990, are analyzed.

The second chapter entitled "Turkish-Israeli strategic cooperation 1991-2002", represents in chronological order the developing process of relations between Turkey and Israel from 1991 to 2002. The first manifestation of reinforcing this relationship goes back to December 1991, when Turkey restored diplomatic relations with Israel at the ambassadorial level. Prior to 1995, bilateral relations had been developing quite dynamically. The number of Israeli tourists visiting Turkey was increasing. Bilateral cooperation in the military-strategic sphere was developing too. There were frequent reciprocal visits by senior officials of the two countries, during which the foundations were laid for multifaceted bilateral cooperation giving strategic character to bilateral relations.

The second chapter highlights the warmest period in the history of Turkish-Israeli relations (1996-1999) as well. In 1996-1997 military, military-technical, trade and other contracts were signed between Turkey and Israel. Simultaneously, the second chapter represents and analyzes the circumstances conditioned by which the coming to power of Islamist Welfare Party did not pose serious obstacles to the deepening of bilateral ties. The second chapter also discusses the reasons for the gradual weakening of bilateral relations during 2000-2002. This part of the thesis also highlights the factors that were potential barriers and constraints to bilateral relations.

The main findings and conclusions of the dissertation are summarized in the conclusion. Considering the nature and dynamics of the development of bilateral relations, we can conclude that these relations were based on regional conjuncture, extra-regional political situation, common interests as well as the attitude of the two countries to all this.